



204. ՀԱՍՏ ՈՒ ՊԵՐԱԿ ՄԻՒ ԿՑԻՆ Ա.

Մին իմաստուն խալիփ ա ինոնմ, տա միշտ ժողովուրթեն մեշին քարոզնե յա կարթհնմ, վըեր իրար նհետ լանդ ինին, խաղաղ ինին, սիրավ կենան, իրար փիստուն շանեն, մին տան խալիսու նման ապրեն, իրեք ժուղիկնե օզում են էտ խալիփին ծըեռք քցին, կարում շնե: Խալիփը տրանցա մինին աշակյերտ ա յոր օնում, մին քանի տարե փորցում, պահում, ամմեն հինչ սուվըրցընում, տրանա ետք էտ աշակյերտին եր կալած շոռ ա կյամ, թե տըհսնա վըեր երկյիր, վըեր քաղաք հունց աւ Թյինոնմ ըն մին քաղաք հանում, տըեղ ամմեն ապրանքու կյին մեկ ա ինում ծին էլ ա տասսը կապեկ, ծմբերուկն էլ, ծուն էլ, ասրեղն էլ: Վերլը, մին խոսկավը տըեղ թանգի ու էժան լի կա: Աշակյերտը խալիփին ասում ա.—Ըստըեղ վըեր մնանք, լանդ փող կաշխատենքլ: Խալիփին էլ ասում ա.—Զէ՛, էտ վըեր լոխ մին կյին ա, ըստեղաս լանդ պեն շի ըսպասվում:

Մին քանի օր տրանք մնամ ըն էտ քաղաքումը: Մին օր տըրանք լսում ըն, վըեր թաքավըրերին պալատումը մին դատ կա: Թյինոնմ ըն: Մին կլող եկած ա ինոնմ մտած էրկու հարկանե մին տոն: Վըեր օզում ա թե փախչի, բալկոնան լոք ա տամ, տըեղը պեցուր ա ինոնմ, եր ա ինգյոնմ, մըեռնում: Էտ տան տիրոշը դատում ըն: Դատողն էլ թաքավըրերն ա ինոնմ: Թաքավըրը տրան հըրցնում ա, թե տոնը խե՞ յըս պեցուր շինալ, վըեր էտ մարթը մը ինգյի մըեռնե: Տան տերն էլ ասում ա.—Ես վարպետին ասալ լըմ, վըեր տոնը էրկու հարկանե շինի, ինքյն ա պիցըրըըրալ: Թաքավըրն ասում ա.—Վըե՞րդեղ ա էտ վարպետը, պերեք կախ տանք: Վարպետը առաջ ա կենում, ասում:—Թաքավըրն ապրած

կենա, մեխակը իմը չի, կոխեկը շենքումը մին ախճիկ կա, միշտ
 բախժոր ձայնով երթ ար ասում, ևս էլ շենքը պիցըցնի, վըեր էտ
 ախճկանը տան ակուշկին հըվուարվե, իրան տըեսնամ. վեր էտ
 ախճիկը լինար, ևս շենքն էնքան պիցըցնիլ չի, թաքավըերն ա-
 սում ա.—Ախճկանը քիթեր, պերերյ կախ տանք, Ախճկանը պի-
 րում ըն վըեր կախ տան, կլնիսը քցնմ ըն օղակը, պումուր ա-
 խնում, տուս ա պրծնում, աղատվում: Իրեք հետ քցնմ ըն, իրեք
 հետ էլ աղատվում ա: Թաքավըերն ասում ա շոռ եկերյ, տըեսեքյ
 հուր կլնիս ա ամմենան մըեծը, պերերյ կախ տուվերյ: Ծոռ ըն
 կլամ, տըեսնում ամմենամըծ կլնիս խալիփին աշակլերտինն ա,
 պիրում ըն վըեր կախ տան: Խալիփը մուտանում ա, թաքավըերեն
 ասում:—Նրա տըեղ ինձ կախ տուվերյ: Թաքավըերը թե՛ լավ,
 վըեր օզում ըս, քեզ կախ կըտանք, Խալիփին ասում ա.—Էտ լավ
 տառավ, վըեր ինձ կախ տաք, ըսպանեքյ պրծներյ, հենգյ րոպե-
 յան ետք կըկյամ իմաստունացած: Թաքավըերը թե՛ չէ՛, չէ՛, թողել
 չըմ, քեզ կախ տան, վըեր տհննց ա, էն ա ինձ կախ տալ կըտամ:
 Դաստին հրաման ա տամ, վըեր իրան կախ տան: Քյենդիրը քա-
 շում ըն, թաքավըերեն կլնիսը քցնմ օղակը, կախ տամ:

Անց ա կենում հենգյ րոպե, տասսը րոպե, քսան րոպե, մին
 ժամ, էրկու ժամ, թաքավըերը սղանում չի: Ժողովուրթը սաղ ուր-
 խանում ըն, քյեփ սարքում, պիրում խալիփին էլ տըեղ թաքավըեր
 տինում: Խալիփին էլ աշակլերտին ասում ա:—Քյինինքյ հսնենքը
 մըեր հայրենիքը, ըստեղ լոխ տասսը կապեկ ա:

